ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/53 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **29 հունվարի 2026թ.**

2026թ-ի հունվարի 9-29-ը ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք հասցեում գտնվող «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/53 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Լ. Ավետիսյան՝	Հիմնադրամի արտադրատնտեսական բաժնի ղեկավար,
Ա. Զոբանյան՝	Հիմնադրամի պահեստապետ,
Ն. Շահնազարյան՝	Հիմնադրամի ավագ հաշվապահ.

Նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար՝ «ՓՐՈՄՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Ավետիսյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/53 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի, ներկայացված հայտերի բացման, գնահատման, առաջարկված գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

1.ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/53 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ և ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լ. Ավետիսյանը նիստը հայտարարեց բացված և հայտնեց տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Աճուրդի մեկնարկային գին	Մեկնարկ	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	Էլեկտրոնիկա	1999222 AMD	2026-01-12 14:30:00	2400000
2	Էլեկտրոնիկա	3083222 AMD	2026-01-12 14:30:00	3700000

ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/53 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացում և բացումը, ինչպես նաև հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/53 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցե	Էլ. փոստ	ՀՎՀՀ
1	ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ	ՀՀ կոտայքի մարզ Ձորաղբյուր 2224 Ջրվեժ Այգետարածք 4/115	hippocrates0109@gmail.com	03584501
2	Պրո Ինվեստ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովայի պող. 19 շենք, Անի Պլազա Հոթել, Բիզնես հարկ, 11 սենյակ	proinvestone@gmail.com	02684635
3	ՏԻԿԱՍՈՆ ՍՊԸ	ք. Երևան, Օրբեելի 33Ա, բն. 15	tikason@inbox.ru	00218132
4	«Աթանեսյան Գրուպ» ՍՊԸ	ք. Երևան, Երվ. Քոչար 17, բն.2	atanesyangroup@gmail.com	02912746

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված

1. Հայտ/եր/ը կազմվել և ներկայացվել են ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/53 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
2. Ներկայացված հայտ/եր/ում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
3. Ներկայացված հայտ/եր/ում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ՝ ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ-ի. հայտում ներառված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 19-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են

էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Բացակայում է իրական շահառուների վերաբերյալ ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթուղթը՝ համաձայն հրավերի 1.3 հավելվածի: Ինչպես նաև 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ առաջարկվող ապրանքի մակնիշի, արտադրողի անվանման և տեխնիկական բնութագրի փոխարեն լրացվել է «a» տառը, սակայն անհրաժեշտ է ներկայացնել նշված չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի հրավերի պահանջներին բավարարող մակնիշի, արտադրողի անվանման և տեխնիկական բնութագրի վերաբերյալ տեղեկատվություն:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված այդպիսին չճանաչված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

Հ/հ	Հրաղեցրածտեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	Ընտրված մասնակից «Հ»
1	1	ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ Ապրանքի ամբողջական նկարագիր	2400000 AMD	36000000 AMD	20%	43200000 AMD	1900000 AMD	20%	2280000.00 AMD	Մերժված
1	2	Պռո Ինվեստ ՍՊԸ Ապրանքի ամբողջական նկարագիր	2400000 AMD	1999222 AMD	20%	2399066.4 AMD	1959000 AMD	20%	2350800.00 AMD	
1	3	ՏԻԿԱՍՈՆ ՍՊԸ Ապրանքի ամբողջական նկարագիր	2400000 AMD	4231000 AMD	20%	5077200 AMD	4231000 AMD	20%	5077200.00 AMD	Մերժված
1	4	«Աթանեսյան Գրուպ» ՍՊԸ Ապրանքի ամբողջական նկարագիր	2400000 AMD	99800999 AMD	20%	119761198.8 AMD	99800999 AMD	20%	119761198.80 AMD	Մերժված
2	1	ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ Ապրանքի ամբողջական նկարագիր	3700000 AMD	36000000 AMD	20%	43200000 AMD	2900000 AMD	20%	3480000.00 AMD	Մերժված
2	2	Պռո Ինվեստ ՍՊԸ Ապրանքի ամբողջական նկարագիր	3700000 AMD	3083222 AMD	20%	3699866.4 AMD	3019000 AMD	20%	3622800.00 AMD	
2	3	ՏԻԿԱՍՈՆ ՍՊԸ Ապրանքի ամբողջական նկարագիր	3700000 AMD	4231000 AMD	20%	5077200 AMD	4231000 AMD	20%	5077200.00 AMD	Մերժված
2	4	«Աթանեսյան Գրուպ»	3700	99800	20	119761	99800	20	1197611	Մերժ

		ՍՊԸ Ապրանքի ամբողջական նկարագիր	000 AMD	999 AMD	%	198.8 AMD	999 AMD	%	98.80 AMD	ված

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.
2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցմամբ առաջարկել գնահատման մեջ ներառված մասնակցին՝ ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ-ին, հրավերով սահմանված կարգով իրականացնել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունների շտկում և հանձնաժողովին ներկայացնել փաստաթղթերի/տեղեկատվությունների շտկված տարբերակները

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Գնահատման մեջ ներառված մասնակցի՝ ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ-ի, կողմից ամբողջական չեն շտկվել գնահատման արդյունքում արձանագրված շտկման ենթակա անհամապատասխանությունները՝ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանություններ ներկայացված բոլոր փաստաթղթերում. Ներկայացված դիմում հայտարարությունում ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ-ն ցանկություն է հայտնել 2,4,5,10,11,12,13,14,16,17,18,19 չափաբաժինների մասնակցության, սակայն ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/53 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է միայն 1 և 2 չափաբաժիններով, մասնակցի կողմից այլ անձին ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/53 ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի ստորագրման լիազորությունները բացակայում են՝ տրված են այլ ընթացակարգի շրջանակում: Ներկայացված բոլոչ փաստաթղթերում՝ այդ թվում, դիմում-հայտարարությունում, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում և լիազորագրում լրացված են այլ գնման ընթացակարգի ծածկագրեր:

Հանձնաժողովը որոշեց.

1. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված՝ ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել: Հրավերի 1-ին մասի 8.15 կետի համաձայն եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում: ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

Կողմ՝ 3, դեմ՝ 0

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց ընթացակարգը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարությունների տեքստերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Ավետիսյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Չոբանյան _____

Ն. Շահնազարյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Էլոյան _____